

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՄԱՍՆԱԿԻՑ՝

Դպրոց՝ Մ.
Գալշոյանի անվան հ.
148 ավագ դպրոց

Ղեկավար՝

Լուսինե Եղոյան
Անուշ Արեւյան

Հետազոտական
աշխատանքի
թեմա՝

Արևմտահայերենի
առանձնահատկությունները

Գր. Զոհրապի
նորավեպերում

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3
2. Արևմտահայերենի առանձնահատկությունները Գր. Ջոհրապի նորավեպերում	4
3. Եզրակացություն	14
4. Օգտագործված գրականության ցանկ	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ընտրությունը պայմանավորված է աշակերտների կողմից արևմտահայերենի դժվար ընկալումով:

«Արևմտահայերենի առանձնահատկությունները» թեման անցնելիս աշակերտներին ավելի հեշտ և ընկալելի դարձնելու համար օրինակները բերում եմ Գրիգոր Զոհրապի նորավեպերից, որտեղ ավելի ցայտուն են երևում արևելահայերենի և արևմտահայերենի տարբերությունները և առանձնահատկությունները:

Նախ՝ նշում եմ, որ ժամանակակից հայերենի երկու գրական ճյուղերն էլ թե՛ արևելահայերենը, թե՛ արևմտահայերենը իրենց արմատներով ձգվում են դեպի գրաբարը, սակայն ժամանակակից արևմտահայերենն ավելի մոտ է գրաբարին, իսկ արևելահայերենն ավելի շատ ընդունել է միջին հայերենի փոփոխությունները: Դեռևս 17-րդ դարում արդեն հստակ առանձնանում են աշխարհագրարի 2 ճյուղերը: Այստեղ կարևոր է նաև նշել, որ տարբեր են նաև երկու ճյուղերի հիմքերը՝ արևելահայերենը ձևավորվել է «ում» պատկանող Արարատյան բարբառի հիման վրա, իսկ արևմտահայերենը՝ «կը» ճյուղին պատկանող Պոլսի բարբառի հիման վրա:

Արևմտահայերենով հաղորդակցվում է Սփյուռքի հայության մեծամասնությունը, սակայն աշխարհաքաղաքական իրավիճակից ելնելով՝ կապված արևմտահայության ներգաղթի հետ, այժմ Հայաստանի Հանրապետությունում նույնպես շատ են արևմտահայերենով հաղորդակցվող մեր հայրենակիցները: Եվ սա ևս մեկ պատճառ է արևմտահայերենն ավելի խորությամբ ուսումնասիրելու և արևմտահայերենի առանձնահատկություններն աշակերտներին ավելի ընկալելի դարձնելու համար:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՆՈՐԱՎԵՊԵՐՈՒՄ

Դասի նպատակը սովորողներին ընկալելի և մնայուն գիտելիքներ մատուցելն է, որի համար որպես հետաքրքիր և մատչելի օրինակներ են հանդիսանում Գր. Զոհրապի նորավեպերից բերված արևմտայերենին յուրահատուկ լեզվական օրինաչափությունները:


Որպես գիտելիքի ստուգման ձև կընտրվի խմբային աշխատանքը՝ կրկին Գր. Զոհրապի նորավեպերից վերցված մեջբերումներով:

Մեջբերումներ անել նուրբ հոգեբան Գր. Զոհրապից և չանդրադառնալ նրա կյանքին և ճակատագրին անհնար է, որովհետև նրա յուրաքանչյուր բառը կամ նախադասությունը ընթերցողին մոտեցնում է տվյալ ժամանակաշրջանին, այդ շրջանին հատուկ սոցիալական, հոգեբանական դրսևորումներին: Ընդամենը մեկ դիպուկ բառով կամ նախադասությամբ Զոհրապը վեր է հանում հերոսի ողջ ներաշխարհը՝ գնահատելու հնարավորությունը թողնելով ընթերցողին:

1. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արևմտահայերենը, ինչպես նաև արևելահայերենը, և՛ գրականության մեջ, և՛ ժողովրդախոսակցական լեզվում պահում է մաշտոցյան այբուբենի բոլոր տառերը: Սակայն գրաբարյան հնչումները տարբեր են, այս երևույթը կապվում է միջին հայերենում կատարված համալիր հնչունափոխությունների հետ: Ըստ այդ հնչունափոխությունների՝ հայերենի եռաշարք բաղաձայներում բոլոր ձայնեղ բաղաձայն հնչյունները արտասանվում են շնչեղ խուլ, իսկ պարզ խուլերը՝ ձայնեղ:

Օրինակ՝



Որոշակի տարբերություն կա նաև «**ռ**» և «**ր**» հնչյունների արտասանության մեջ: Արևմտահայերենում դրանք հնչում են նույն կերպ. կոշտ **ռ**-ն հնչում է փափուկ **ր**-ի նման.

Օրինակ՝

«Արշալույսին հետ՝ վարանոտ քայլերով ետ կը դառնա, իր բանտին նորեն, որուն **դրան** առջև կը գտնեն զինքը առտուն ու ներս կ'առնեն»:

«Զարուղոն»:

2. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻՑ

Արևմտահայերենը՝ ի տարբերություն արևելահայերենի, բայի սահմանական ներկան կազմում է **կը** մասնիկի միջոցով: Եթե բայը սկսվում է բաղաձայնով, ապա նրա առաջ դրվում է **կը** մասնիկը և գրվում է առանձին, սակայն եթե բայը սկսվում է ձայնավոր հնչյունով, ապա **կը** մասնիկի փոխարեն գործածվում է **կ'** և գրվում է բայի հետ միասին:

Օրինակ՝

«Ոչ ոք **կը համարձակեր** այք նետել կամ դարպաս ընել անոր. Կեսարի խոսեցյալն էր անիկա. իր բացակա նշանածին տարածած սարսափին մեջ պլլված՝ աներկյուղ **կը պտտեր** ամեն տեղ. ու զինքը պահպանող այս վախը **կը վայլեր** իրեն. անմատչելի ըլլալը՝ հրապուիչ **կ'ընէր** զինքը»:

«Զարուղոն»

Աշակերտների հետ միասին փորձում ենք հատվածը փոխակերպել արևելահայերենի: Այնուհետև շարունակում եմ առանձին-առանձին ներկայացնել արևմտահայերենի առանձնահատկությունները՝ միաժամանակ ընդգծելով արևմտահայերենի ու արևելահայերենի տարբերությունները:

Արևմտահայերենը գրաբարի բայական 4 լծորդություններից պահպանել է 3-ը (**-ել, -ալ, -իլ**):

Օրինակ՝

«Տանը մեջ **կսկսեք վարժվիլ**. իր առած ամսականը ամբողջությամբը գեղ **կը դրկեր**, էրկանը ձեռքը, ու գոհ էր այս կյանքեն»:

«Փոստալ»

«—Ըռնտիկ մեկը **ըլլալու է ամեն բանե առաջ**. հո՛ գ չէ թե որ սկիզբը ձեռքեն գործ չգա. հոս շուտով խզմեթը կը սորվի. արդեն մեծ բան մըն ալ չունի ընելիք. տղուս՝ Օննիկին սենյակը պիտի շտկե, զգեստները մաքրե. սա ալ ըսեմ, որ աղջիկ զավակ չեմ ուզեր տանս մեջ»:

«Փոստալ»

Տարբերություններ կան նաև գոյականների թվակազմության և հոլովման համակարգերի միջև: Արևելահայերենում գրեթե բոլոր գոյականների հոգնակին ենթարկվում է **ի** հոլովմանը, իսկ արևմտահայերենում ենթարկվում են **ու** հոլովման:

Օրինակ՝

«Երկու **եղբայրներուն** մեջ Հակոբոս՝ **այինկաճիներու** մեծը՝ անդրանիկն էր. սևաչվի, սևահեր երիտասարդ, ամառ ձմեռ պահելով իր մեղրագույն ապայե փոթուռն ու շալվարը, հաստ տոկուն կտավ, որ դաշույնի **հարվածներու** կը դիմադրեր և գոր ցերեկները կը պտտցներ Իզմիտի չարշուին մեջ, գորավոր **մարդերու** հաստուկ դանդաղ ու ծուլլ քայլվածքով»:

«Այինկա»

«Ծխախոտի հին **խուզարկություններու, գրավումներու** հիշատակը կուզար արծարծել մշտնջենական հակառակությունը. **կոիվներու** մեջ տրված առնված **վերքերու** սպիները կը բացվեին այս պահուս, իրենց շարավին հոտովը, թարմ արյունի բուրումովը զայրացնելով հաստուցումի պետքը և կծու մարմաջը. . . »

«Այինկա»

Հոգնակիի կազմության ժամանակ **ի** և **ու** հնչյուններ ունեցող բառերը հանդես են գալիս անհնչյունափոխ հիմքով:

Օրինակ՝

«Մկիզբները Վասիլիկ երջանիկ երջանիկ եղավ այսպես»:

«Զարուղոն»

«Լուսինին պես խավար պետք էր, որպեսզի փայլեր. էսպես աղջամուղջի դշխոն էր այս աղջիկը»:

«Զարուղոն»

*«Վասիլիկ՝ ինքը գոհ կը թվեր այս կյանքեն. մարդ մը կար **մութին** մեջ, որ զինքը կը պաշտեր, Ռյույ Պլասի ըսածին պես, առանց երևան ելլելու, առանց իր քովը գալու հրապարակավ»:*

«Զարուղոն»

Արևմտահայերենում ստացական հոգնակիները կազմվում են բառի հոգնակի հիմքին ավելացնելով **նի** մասնիկը և ստացական հոդը՝ անկախ վանկերի քանակից:

Օրինակ՝

«Ամենքնիս կը ճանչնայինք Վասիլիկը, այն վտիտ դեմքով ու թնջուկ մազերով աղջիկը, որ գույնզգույն պատմուճաններով, արտակարգ արդուզարդերով՝ վերը, լեռը կուզար պտտելու մինակը, շաբաթ իրիկունները»:

«Զարուղոն»

«Իսկույն քովը վազեցի և երկուքնիս բազմոցին վրա տեղավորեցինք զինքը. հազիվ կրցավ աչքերը բանալ. անմիջապես տեսա սրտի կաթվածի բոլոր նշանները»:

«Երջանիկ մահը»

Արևմտահայերենում բացառական հոլովը կազմվում է **է (ե)** վերջավորությամբ:

Օրինակ՝

*«Անոնց գծին վրա չի քալեր, այլ քիչ մը **ետնեն**, իր անբաժան պայուսակը ձեռքը, ու երբ պատահի, որ առևտուրի մեջ մեկու մը **երեսեն** վնաս մը կրեն այդ մարդիկը, ինք **անոնցմե** ավելի կզայրանա այդ մեկուն դեմ, խաբեբա ու խարդախ կը կոչե զայն, որ իր վաճառականին, այդ պատվավոր մարդուն ապրանքները շորթած էր ու ստակները չէր ուզեր հատուցանել»:*

«Ճիտին պարտքը»

«Մա դեմի կողմեն քալողը կը ճանչնար անշուշտ, ատենով իրեն մրցակից եղող վաճառական մըն էր, բայց շատոնց բարևը կտրած էին, իր **աղքատանալեն** ի վեր. սա մյուսը, որ արագ քայլերով իր **քովեն** անցավ հիմա, ան ալ կը ճանչնար, ատենով երաշխավոր ալ եղած էր անոր, բայց քանի մը օր առաջ **մեճիտիե** մը փող տալ մերժած էր և հիմա ալ փախչելու պէս, երեսը պահելով իր **քովեն** կ'անցներ»:

«Ճիտին պարտքը»

Արևմտահայերենին հատուկ է նաև սեռական, բացառական, գործիական հոլովներում որոշիչ հոդի կիրառությունը, իսկ ուղղական հոլովում՝ անորոշ առումը:

Օրինակ՝

«Եվ իր սիրտը լեցնող **արհամարհանքին** (սեռական հոլով) առջև վրեժի գաղափարը կը թուլնա. ձեռքը կը քաշե **դանակին** (սեռական հոլով) **բունեն** (բացառական հոլով), գոր իր պրկված մատները կիսովին դուրս քաշած էին մեջքի **գոտիեն** (բացառական հոլով). ո՛չ, չեն արժեր ասոնք իր գայրույթը, ու կամացուկ դուրս կելլե կրկին»:

«Զարուղոն»

«Ասոր վե՞րջը. **Զարուղոն** (ուղղական հոլով) երբեք չէր խորհած աստոր. ընդհակառակը կը փափագեր, որ վերջը չգա»:

«Զարուղոն»

«Ալ չկրցավ սպասել անոր, գիշերները լուսցնել, **ժամադրություններուն** (սեռական հոլով) գտնվիլ, սա **պարտեզին** (սեռական հոլով) մեջ, կամ այն լեռան վրա. ամեն առթիվ գանգատեցավ, բողոքեց ու լացավ. մյուսը կը զարմանար. ինչո՞ւ այս արցունքը, չէ՞ մի որ առաջվան պէս կը սիրեին իրար. ի՞նչ փույթ մնացածը. **Զարուղոն** (ուղղական հոլով) իր առանձնացած **կյանքովը** (գործիական հոլով), միամիտ մարդու հատուկ անծայր գաղափարները կը պարզեր»:

«Զարուղոն»

Կարևոր եմ համարում նաև անդրադառնալ **մի** անորոշ դերանվան գործածությանը: Արևմտահայերենում **մի** անորոշ դերանունը հանդես է գալիս **մը** կամ **մ'** ձևով և, ի տարբերություն արևելահայերենի, միշտ հաջորդում է լրացյալին:

Օրինակ՝

«Աղեկ օրեր ու գեշ օրեր ուներ այդ տոպրակը. տիրոջը պես ճակատագիր մը հարափոփոխ և անոր պես հոգի մըն ալ ուներ կարծես»:

«Ճիտին պարտքը»

«Զիջում մը, ստորացում մը պիտի ըլլար իրեն համար խոռվել կույսի մը մաքուր հոգին՝ այս կենցաղասեր մարդուն մեջ՝ ահա այս կերպ իր կյանքին հակասող ազնվություններ ալ կային»:

«Երջանիկ մահը»

Արևմտահայերենի շարահյուսական կարևորագույն առանձնահատկությունը անձի առման քերականական կարգի բացակայությունն է:

Արևմտահայերենում անձնանիշ ուղիղ խնդիրը տրականաձև հայցականով չի դրվում, այլ դրվում է միայն ու միայն ուղղականաձև հայցականով: Այս հանգամանքը աշակերտների մոտ առաջացնում է որոշակի շփոթ, ինչն էլ դժվարացնում է ենթական և ուղիղ խնդիրը իրարից տարբերակելը: Սա ևս ունենում է իր բացասական նշանակությունը նյութի բովանդակային իմաստը ճիշտ ընկալելու պարագան:

Օրինակ՝

«Ամենքնիս կը ճանչնայինք Վասիլիկը, այն վտիտ դեմքով ու թնջուկ մազերով աղջիկը, որ գույնզգույն պատմուճաններով, արտակարգ արդուզարդերով՝ վերը, լեռը կուզար պտտելու մինակը, շաբաթ իրիկունները»:

«Զարուղոն»

«Այն ատեն հուսահատած՝ հոժարությամբ բաժանում ձեռք բերելե այս նշանտուքեն, որ օրհնված պսակե ավելի ամուր ու հաստատ կերևար, դիվային խորհուրդ մը անցավ մտքեն. գիշեր մը ոստիկանները կանչեց ու ձերբակալել տվավ Զարուղոնը»:

Արևմտահայերենում կարևոր է նաև ժխտական դերանունների գործածությունը բայի հետ. ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում կրկնակի ժխտում երբեք չի հանդիպում:

Օրինակ՝

*«Այսպես էր Վասիլիկ. իր մեկուսացումը՝ լքում կը նշանակեր. **ոչ ոք** իր երեսը **կը նայեր** փողոց ելած ատեն. գեղին բոլոր երիտասարդները իր հրապույրներեն կը դողային»:*

*«**Ոչ ոք կը համարձակեր** աչք նետել կամ դարպաս ընել անոր. Կեսարի խոսեցյալն էր անիկա. իր բացակա նշանածին տարածած սարսափին մեջ պլլված՝ աներկյուղ կը պտտեր ամեն տեղ. ու զինքը պահպանող այս վախը կը վայլեր իրեն. անմատչելի ըլլալը՝ հրապույիչ կ'ըներ զինքը»:* («Զաբուղոն» էջ 235):

Իրականում բազմաթիվ են արևմտահայերենի առանձնահատկությունները, սակայն հետազոտական աշխատանքի ծավալները հնարավորություն չեն տալիս անդրադառնալ նյութին ամբողջությամբ: Նպատակահարմար չեմ համարում նաև անդրադառնալ արևմտահայերենի բառապաշարին, քանի որ այն ինքնին շատ ծավալուն նյութ է:

Նյութի յուրացումից հետո, որպես ստուգում անցկացնում եմ խմբային աշխատանք: Դասարանը բաժանվում է հինգ խմբի, յուրաքանչյուրին տրվում են հատվածներ տարբեր նորավեպերից, որոնցում պետք է գտնեն արևմտահայերենի առանձնահատկությունները: Այս աշխատանքի արդյունքում կնշանակվեն և՛ ձևավորող, և՛ միավորային գնահատականներ: Կհանձնարարվի նաև տնային առաջադրանքը: Այն լինելու է բազմաշերտ. նվազագույն դրական գնահատականի հավակնություն ունեցողները պետք է տվյալ նորավեպից գտնեն ևս մեկ հատված, որտեղ կառանձնացնեն զոնե մեկ առանձնահատկություն: Միջին գնահատական ստանալու համար առանձնահատկությունների քանակը պետք է մեծանա, և աշակերտը պետք է կարդա տվյալ նորավեպը: Բարձր գնահատականի հավակնորդները պետք է ամբողջ նորավեպից պետք է դուրս գրեն առնվազն 6-7 առանձնահատկություններ ունեցող նախադասություններ, համառոտ ներկայացնեն նորավեպը և դասարանում կատարած

աշխատանքի սկզբունքով վերածեն արևելահայերենի: Դասարանում տրվում են հետևյալ հատվածները.

1-ին խումբ

Օր մը սակայն այս ամենը ծաղրելի թվեցան իր աչքին: Իր գաղտագողի ու թաքուն երջանկությունը բան մը կը կորսնցնէր այսպէս ծածուկ մնալով և չկրնալով ուրիշներուն ցուցվիլ: Երևակայեցէք մեծագին ադամանդ մը, որ հավիտյան տուփի մը մեջ փակված մնալու դատապարտված ըլլա ու չկրնաք օր մը կուրծքներնուդ վրա դնելով դիմացիննիդ շլացնել:

Իր բոլոր վայելքները, իր բոլոր ունեցածը այս գոցված ադամանդին տպավորությունը կը թողէին: Ինքը մանավանդ, ցուցամոլ էակ, չէր կրնար գոհանալ կյանքի այն ներքին ու լռին ներդաշնակությամբը, որ ահա իր ձեռքին տակն էր և որ դուրսը արձագանք չէր ձգեր. մարդիկ կան, որ դերասաններ են աշխարհիս վրա. իրենց սեփական կյանք ու գոյություն չունին և ուրիշներուն համար կ'ապրին միայն. հանդիսատեսներ պետք է ասոնցպէսներուն, ու կյանքը հրապույր չունի եթէ զիրենք դիտողներ պակսին. դերասաններ՝ որ հանձն չեն կրնար առնել թափուր սրահի մը առջև ներկայացում տալու:

2-րդ խումբ

Հիմա ամենուն ծանոթ է ինք, զոր լերան մեջ ավազակը ու ճամփուն վրա ձիապանը կը ճանչնան, կը սիրեն. մեջքի դաշույնը, որուն երկաթը Պոլսեն եկած գնած է, Դամասկոսի դյուրաթէք երկաթ, վետվետող երանգներով, երբէք զուր տեղը փայլատակած չէ: Ծառերը կը ճանչնան զայն, այնքան շատ իրենց կեղևին վրա Հ գիրը՝ իր երբեմնի դպրոցական կյանքեն մնացող միակ հիշատակը՝ փորագրած է, սրտնեղության, ձանձրության վայրկյաններուն մեջ:

Այս քաղաքին շրջակայքը՝ ծխախոտի ամեն փոխադրություն իր աչալուրջ ու ճարտար պահպանության կը հանձնվի ամեն ատեն. երբէք չի թողուր փախիլ իր արիության վստահված ապրանքը. հնարքը ու քաջությունը կը լծորդէ փորձ ռազմագետի մը պէս ու կը հաջողի:

Հիմա պիտի նշանվի. ո՞վ զավակ կուտա այս լերան մարդուն. և սակայն մեկե ավելի աղջիկներ սրտատրոփ կը սպասեն դուռը իր անցուդարձին, իրկվան մութին:

«Այինկա»

3-րդ խումբ

Երիտասարդը՝ տժգույն ու նիհար մեկն էր, գոր կիները իրարու ձեռքե կը խլեին: Իր վրդոված կյանքին կը պարտեր այս ձգողությունը: Ուրույնություն մը ուներ անիկա, և իրեն հատուկ դրոշմը կար իրեն պատկանող ամեն բանի մեջ: Արհամարհոտ պզտիկ ժպիտ մը նուրբ ու սև պեխերուն ծայրը, կոպերը կտրած աչքեր, որոնք իր գիշերամուլ, մարդու հոգնությունները կը պատմեին. վես խրոխտություն մը, որ վաղաթարշամ երիտասարդությանը վրա ծավալած ծանրության պես բանի մը կը նմաներ, կածես ուսումներու և հսկումներու մեջ խորասուզվող մարդու ծանրությունը:

Մտքի ու ճաշակի տեր մեկն էր: Իրավագիտություն սորվելու համար Եվրոպա կեցած տարիներեն՝ միջակ վկայականով մը, բայց նրբացած իմացականությամբ վերադարձած էր հոս: Համալսարանին սրահներեն ավելի՝ գեղեցիկ կիներու քով, միանգամայն՝ տաղանդավոր մարդոց և լավագույն ընկերությանց մեջ մտած ու ապրած էր, մսխելով փճացնելով ունեցածը և չունեցածը: Հոս ոչ փաստաբան եղեր էր և ոչ դատավոր. անկեղծությամբ, քաջությամբ խոստովանած էր իր ապիկարությունը:

«Երջանիկ մահը»

4-րդ խումբ

Ծովին հայելիի պես արծաթած երեսին վրա՝ այս մարմինը, իր ճիտեն կախված պայուսակովը, մակույկը ետին ձգած նավու մը կը նմաներ, հեռուն, խիստ հեռուն. ջուրին մեջ երկուքն ալ կապված էին, ինչպես կյանքին մեջ ալ զատված չէին իրարմե: Կապը անեղծ կը մնար ամեն տեղ: Քար լեցված այս կաշիե տոպրակը ալ պարպվելու վախ չուներ այսուհետև. հազեցած ու կշտացած փորն էր, գիրգ և ուռեցվորած. իր տեղը՝ մարդոց թնին տակը չէր, ուր այդքան տարի ծալված, սեղմված ու շնչահեղձ մնացած էր, ո՛չ. այդ պայուսակը՝ իր անողորմ համառությամբը, իր հուսահատեցուցիչ դատարկությամբը,

մարդոց ճիտին պարտքը կը մարմնացնէր անշուշտ. իր ճշմարիտ տեղը, ուրեմն, անոր վզին վրա էր, ճիշտ հո՛ն, ուր հաստատված էր հիմա:

Եվ երեսուն տարիէ ի վեր, վտարվածի մը նման՝ որ առջի անգամ իր բուն տեղը գտնելուն ու բազմելուն համար կ'ուրախանա, քէյֆ կ'ընէ, ծովուն ամեն ծփանքին հետ՝ պայուսակը իր կոպիտ մորթովը մարդուն երեսը կը գգվէր ու կը շոյէր:

«Ճիտին պարտքը»

5-րդ խումբ

Այս Պոլսո մարդիկը, իրենց բոլոր քաղաքավար վարմունքին հակառակ, կնկան նայելու ձևեր մը ունէին, որ համբուրելու պէս կը դպչէր իր երեսին և իր նոր հարսի, գրեթէ կույսի ամչկոտությունը կը վիրավորէր ամեն վայրկյան: Միմիայն իր կնոջական բնագործը կ'զգար լուռ իղձերու հովը, որ իր շուրջը կ'ելլէր, կը բարձրանար, երբոր էրիկ-մարդոց առջև գտնվէր, անուշ բերած կամ ջուր տված միջոցին: Եվ, դեպի դուռ դարձած՝ սենյակէն դուրս ելլելուն, ամեն աչքերը իր վրա էին, իր հաղթ ու գեղեցկաշէն մարմնին վրա որուն լեցուն գիծերը, իր քավածքին համեմատ հազիվ թէ նշմարելի շարժումով մը կը խաղային: Մինչև անգամ իր հագուստը ու կապուստը, շինականի և սպասուհիի պարզությամբ, և թերևս ատոր համար, հրապուրիչ բան մը ունէր:

«Փոստակ»

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով նյութը՝ պետք է փաստել, որ Գրիգոր Զոհրապ գրողն այնքան նուրբ հոգեբան է և այնքան հմուտ է իր շարադրանքի մեջ, որ մի փոքր անդրադարձն անգամ շեղում է քերականական նյութից, և տանում դեպի գեղարվեստի խորքերը:

Հնարավորինս փորձ է արվել մի քանի նորավեպերից դուրս գրել արևմտահայերենի առանձնահատկությունները և օրինակներով նշել դրանք: Կան բազմաթիվ մեջբերված օրինակներ, որոնց քերականական աշխատանքն ավելի մեծ ու խորը դարձնելու համար նպատակահարմար է վերցնել 2 – 3 նորավեպ և աշխատել: Այս հնարավորությունը տրվում է սովորողներին, որոնցից հետաքրքրվածները կարող են որպես նախագծային աշխատանք ավելի համակողմանի ուսումնասիրել տրված նորավեպերը:

Պատահական չէ, որ հայ գրականության մեջ Գր. Զոհրապին անվանում են հայ նորավեպի իշխան:

Վերջում մնում է միայն ավելացնել, որ ինչ էլ ասվի, գրվի միևնույնն է Գր. Զոհրապ հեղինակի անհատական խորությունը, ինքնատիպ բացահայտումները դեռ շատ ու շատ սերունդների պիտի ձգեն իրենց խորքերը և հիացնեն՝ դրանով իսկ նորանոր հոգեբանական վերլուծությունների հիմք հանդիսանալով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգոր Զոհրապ. Նովելներ, Երևան – 1978
2. Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան. Չայ ոց Լեզու, Երևան - 2010
3. Է. Աղայան. Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան – 1976
4. Ա. Սարգսյան. Արևմտահայերենի բառարան, Երևան – 1991
5. Գ. Օհանյան. Արևմտահայերենի բառարան միջին և
ավագ դպրոցի սովորողների համար